

Պարագլուխ լեալ կանանց՝ երգէր ըզբան օրհներգութեանն:
 Իսկ աստէն, ընդ ընկղմել Փարաւօնին աներևոյթ,
 Գասագլուխ լինէր կանանց Մագթաղենին Մարիամ,
 Որ դեգերէր ի պարտիզին և պարտիզպան կարծեալ ըզՏէրն,
 Անձկանօք հարցանէր. Տէր, դո՞ւ բարձեր, արդեօք ըզՏէրն.
 Ասա՛ ինձ, թէ ո՞ւր եդեր, զի ես առից ըզնա ինձ:

Ո՛ր, ո՛ր Մարիամ, միթէ Յիսուս քո բաժին է, որ զայն առնուս
 դու միայն:

Եւ երբ Յիսուս աղու ձայնիւ կոչեց զանուն, Մարիամ,
 Մագթաղենին խանդաղատեալ փարիլ կամէր զոտիւք սիրոյն.
 Դեռ աստ եմ, Մարիամ, մի խուճապեր մերձենալ յիս.
 Ե՛րթ, ասէր, վաղագոյն դու առ եղբարսն իմ՝ թափառեալ,
 Ասա՛ տեսի ես ըզՏէրն ի պարտիզին, Յարեա՛ւ, Յարեա՛ւ:

(Ի Հրաւիրակէն Երկրից Աւետեաց)



ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ՅԱՐՈՒԹԻԻՒՆԸ

«Զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկուսս մահու. քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ»:

Գործք. Բ. 24:

Մեր ժողովրդի մէջ նախապաշարմունքի կարգ է անցել այն միաբը, թէ Զատիկը որ եկաւ՝ քրիստոնեան իւր հաշիւները վերջացնում է եկեղեցու հետ: Եթէ պատահում էր Մեծ պասին՝ Աստուածը մէկ մէկ միան էր ձգում, ժամ էր գնում, այժմ այլ ևս առանձին կարիք չկայ. երկար ժամասացութիւնները վերջացել են, եղած կարծն էլ նոցա գրաւչութիւնը չունի. եթէ մի քանի եկեղեցիներում նշան երեւացել էր, որ Աստուծոյ տունը Աստուծոյ պատուէր-

ները յայտնելու, աւետարանի ճշմարտութիւնները սովորեցնելու անդ պէտք է լինի՝ գրի սեն ու սպիտակը ջուղով մի տէրտէր, կամ հեռուից մտիկից եկած մի վարդապետ անգան էր բարձրացել ու քարոզ խօսել, այդ էլ դադարում է: Եստ շատերի կարծիքով քարոզ ասածդ ուրիշ բան չէ, բայց եթէ մի խրատ, որ հոգեւորականները պարտաւոր են տալ աշխարհական մարդոց, նրանք իրենց պարտքը կատարում են, երբ որ յիշեցնում են— ապաշխարութեան օրեր է, ժամ եկէք, միմեանց սիրեցէք, մի՛ գրկէք սուտ մի՛ խօսէք եւն. սրանք էլ իրենց պարտքն են կատարում՝ մէկ երկու անգամ այդպիսի խրատներ լսելով— վերջացան. զատկին ո՞վ գլուխ ունի քարոզ լսելու: Եւ գուրս է գալիս, որ քրիստոնէութեան ամենամեծ աօնը մատաղ, կամ զատկական գառ ու խմբերդէն ուտելու, նոր շորեր հագնելու և իրար տուն շնորհաւորութեան գնալու համար է միայն: Մեր քահանաներն էլ, փափք Աստուծոյ, լաւ են ծանաչում իրենց ժողովրդին, գիտեն ամէն կերպ յարմարուել նրա տրամադրութեանը. չէ՛ թէ քարոզ, տեղ տեղ, մանաւանդ քաղաքներում, շատ մարդ պատարագ լսելու զիւրութիւն անգամ չունի. զատկի կիւրակէ օրը պատարագը կից են անում, շտապ շտապ, որպէս զի շուտ աղատուեն, անօրհնէք ման գան. ժողովուրդն էլ ապա լինի վաղ սկսելու իւր շնորհաւորութիւնները: Եւ ահա պտտում են ամէնքն՝ ամբողջ օրը, սրանք անէ տուն ընկնում — «Այսօր յարեաւ . . . » շարականը վրայ տալիս, նրանք պատահողին «Քրիստոս յարեաւ» են ասում անցնում, և հազարից մէկը չի կանգնում, ինքն իրեն հարցնում, թէ ի՞նչ խորհուրդ ունի իւր ասածը — ի՞նչ ահաւոր, բազմաբովանդակ ու մեծ խորհուրդ:

Սակայն, ինչպէս Առաքեալը վկայում է՝ այդ խորհուրդն է քրիստոնէութեան հիմնաքարը. եթէ Քրիստոս յարութիւն առած չլինէր, Նորա ամբողջ քարոզութիւնը գուր կանցնէր, քրիստոնէութիւնը հիմք չէր ունենայ. եթէ յարութեան խորհուրդը չըմբռնէք, միևնոյն է թէ քրիստոնէութիւնն իւր տեղով չենք ըմբռնում: Նորա համար և քրիստոնէութիւնը տարածող առաքեալների առաջին քա-

բողը յարութեան քարոզ էր. սրչափ հեռու ենք մենք այդ առաջին ժամանակի քրիստոնէութիւնից՝ սպաջոյց հէնց այդ, որ նոցա առաջինը մեզ համար վերջին է դարձել. յարութեան քարոզով մենք ամենեւին չենք հետաքրքրուում նորա մասին ոչ մի պարզ գաղափար չունինք, մինչդեռ այդ գաղափարից է կախուած մեր ճշմարիտ քրիստոնեայ լինելը կամ չլինելը: Իսկ ինչպէս կարող ենք ստանալ այդ գաղափարը եթէ ոչ կրկին առաքեալների քարոզութեանը դառնալով և աշխատելով նոցա համար ունեցած խորհուրդն ու նշանակութիւնը բմբռնել:— Իսկ ասում են նորա հրէայ ժողովրդին, Յիսուսին խաչ հանեցիք և կարծում էք թէ մեռաւ անցաւ. բայց մենք վկայ ենք, որ նա յարութիւն է առել ու կենդանի է:— Չմոռանանք, որ այդ ասողները Յիսուսի մասնութեան ժամին թողել փախել էին ու նոցանից ամենաքաջն այդ գիշեր երեք անգամ ուրացել ժխտել էր նորա աշակերտ լինելը. մինչ այժմ վկայ դառնալով նորա յարութեան՝ բոլորը պատրաստ էին աւելի շուտ խաչ բարձրանալ նորա նման քան յետ կենալ իրենց վկայած ճշմարտութիւնից:— Մեր առաջին հարցն այն է ուրեմն թէ ինչպէս կատարուեց այդ մեծ փոփոխութիւնը, ինչպէս համոզուեցան առաքեալները, որ Յիսուս յարութիւն է առել և ինչո՞ւ այդչափ կարևոր և հիմնական նշանակութիւն ունէր նոցա համար յարութեան խորհուրդը: Ապա կարող ենք հարցնել թէ ինչպէս պէտք է ձեռք բերենք մենք նոյն համոզումը և ի՞նչ արժէք ունի այն մեզ համար, ու ականել վերջապէս, թէ ի՞նչ նշաններով է ցոյց աւելի իւր ոյժն աշխարհի մէջ այդ համոզմունքը:

Պետրոս առաքեալի մի ակնարկը առաջնորդում է մեզ նորա և իւր ընկերների տրամադրութեան խորքը թափանցելու. Աստուած յարութիւն տուաւ խաչեցեալ Յիսուսին, որովհետեւ անհնարին էր որ նա մահուան ձեռքում գերի մնար:— Քանի՛ քանի՞ անգամ արդեօք իրենք իրենց հարց էին տուել Յիսուսի աշակերտները. ինչպէս եղաւ այս ամէնը, ինչպէս կարող էր նա մեռնել— նա, որի մէջ մահկանացու ոչինչ չկար, որ Եսայէլի փրկիչը պէտք է լինէր և

իրօք արդէն շատ անհատներ չամար իրրե փրկիչ հանդիսացել էր: Մեռնում են մարդիկ այն պատճառաւ, որ մեղքի տակ են, որ նիւթական ցանկութիւնները կաշկանդում են նոցա հողագնտի հեա, մաշում նոցա ոսկորներն ու հող դարձնում: Իսկ Յիսուս իշխան էր մեղքի, ոչ մի մեղանշական հակում գլուխ չէր բարձրացրել Նորա անարատ սրտի մէջ, որ լի էր եղել միշտ սրբազան ոգևորութեամբ՝ միշտ և միայն Աստուածային Հոգւոյ թելադրութիւններին հետեւելու պատրաստ, որից ուրեմն երբէք մի եղծիչ ու քայքայիչ սերմ չէր ընկել Նորա անապական մարմնի մէջ: Մահուան են դատապարտուում մարդիկ նաև աշխարհի անիրաւութեան երեսփոխ և Աստուած թոյլ է տալիս, որ շարք յաղթանակէ, երբեմն նաև անմեղ զոհեր տանէ. բայց եթէ ի մտոյ քննենք, կանոնենք, որ կատարեալ զոհ իսկապէս ոչ ոք չի եղել. մէկը տուժում է իւր գործած սխալների միւսը մերձուորների յանցանքի պատճառաւ, — ամէնքն ունին շարութեան և ստութեան այնչափ թոյն իրենց մէջ, որ բաւական էր նոցա դատապարտութեան համար, եթէ զբոխց իսկ չկար դատաստանը. իսկ Յիսուս, որ համակ ճշմարտութիւն էր և սրբութիւն, որ իւր շուրջը միայն բարիք էր սփռել, որի խօսքը լոյս էր եղել՝ կոյր աչքերն և կոյր մըտքերը բացել, որի շունչը կենդանութիւն էր տուել մեռածին, զօրութիւն ընկածին, դալարումն զոսացածին . . . Նա ինչո՞ւ պէտք է դատապարտուէր, ինչո՞ւ պէտք է արդար Աստուած թոյլ տար, որ Նա անարդարութեան նշաւակ լինէր, անարգանք ու տանջանք կրէր, մահուան դառնութիւնը ճաշակէր: Ինչո՞ւ . . . ինչպէ՞ս կարող էր լինել այդ ամէնը, եթէ յիրաւի արդարադատ Աստուծոյ օրէնքն է աշխարհ կսռալարում, եթէ սրբութիւնը կենդանարար է, ճշմարտութիւնը յաղթական, բարութիւնն ամենագօր . . .

Մենք զուցէ ընդունակ չենք այլ ևս չափելու ինչպէս հարկ է այն ահագին ծանրութիւնը, որով այս հարցերը պէտք է ձնչէին առաքեալներին: Իրրե Չերմեռանդ հրէաներ նոքա մի վայրկեան անգամ Աստուծոյ արդարադատ զօրութեան վերայ չէին կասկածել. իրրե Յիսուսի անմիջական հետեւող

ներ նորա երկար ժամանակ շնչել էին այն անմահական մթն-
նորոտից, որ Աստուծոյ Որդու շուրջը պէտք է տարածուած
լինէր՝ գտնուել էին նորա գերբնական անձնաւորութեան հը-
րապշրիները, այդքէլ այն գիտակցութեամբ, թէ այսօր չէ
վաղը իբրև աշխարհ նուաձող զօրութիւն հանդէս կգայ նո-
րա մէջ գործող այն երկնային բարոյական տարրը որի բա-
բերար ազդեցութիւնն զգում էին իրենց հոգու խորքում
իրենց ներքին կեանքի իւրաքանչիւր շարժման վերայ: Եւ
յանկարծ ամէն ինչ տակն ու վրայ է լինում: Իսրայէլի փըր-
կիչը մի խեղճ կալանաւոր է թշնամիների ձեռքում՝ ամենա-
մեղաւորն ու անարգը մարդկանցից ատեանն առաջ. մի քա-
նի սգորմելի գիտուորներ նորա ձեռները կապում են և
հրեշտակների գնակը չեն թշնում արձակելու. կեղծաւոր
անձնահամ զատուորներ գատում են նորան և երկինքը
լուել է, արդարութեան կայծակներ չի թափում նոցա
գլխին. այլ ևս ի՞նչ բանի վերայ կարելի է ուրեմն յոյս դը-
նել, ուր որոնել մարդկային կեանքի խնայար, ում ապա-
ւինել չարութեան և արիւտութեան երեւոյց — Ա՛յք է
լաւ պատկերացնենք մեզ առաքեալների այս յուսահատ գը-
րութիւնը՝ հասկանալու համար նոցա գատապարակի վերա-
բերմունքը, որ ցոյց առին իրենց Արդապետի մատու-
թեան ու չարչարանսց ասոնապայից բոպէներում: Անշուշտ
միայն երկիւղը, մարդկային ստոր բնազդները չէին պատ-
ճաւ, որ նոքա այնպէս վատարար թողին փախան: Որչափ և
Փրկիչն աշխատել էր նախապատրաստել նոցա այս բոպէների
համար, այնուամենայնիւ հարուածը չափազանց զօրեղ էր
և անակրնկալ. ի՞նչպէս, Աստուծոյ Օծեալը գերի, Կեանքի
Առաջնորդը մահուան գրկում . . . և եթէ նա ինքն իրեն
պաշտպանել չի կարողանում եթէ չի պաշտպանում Իօրա-
յէլի Աստուածը, ի՞նչ կարող են անել մի շնչին խուժք ան-
զէն Գալիլիացիներ. նոցա մտում էր մի մութ անկիւն որո-
նել, ուր իրենց ամօթը, իրենց թշուառութիւնը, իրենց
յուսահատութիւնը ծածկէին . . . Եւ խաւար էր նոցա շուր-
ջը, խաւար նոցա հոգու մէջ, անթափանցելի, ծանր խու-
ւար — խեղդելու չափ Իսկ երբ յարութեան լոյսը փայլա-

տակեց այդ խաւարի մէջ, երբ Յարուցեալը նոցա առաջ յայսնուեցաւ և նոցա տանջող հարցը — ինչպէ՞ս կարող էր մեռնել Աստուծոյ Որդին — իւր լուծումն ընդունեց, և պարզուեց, որ Աստուածային Նախախնամութեան անօրինութիւնն էր այդ, որ Աստուծոյ Որդին կենդանի է, — կայ ուրախութիւն, որ համեմատուէր առաքեալների զբացածին: Նոցա ուրախութիւնն այնչափ մեծ չէր լինի սակայն ու նոցա ոգեւորութիւնը աշխարհ վերանորոգող ոյժ չէր դառնայ, եթէ նոքա ճաշակած չլինէին Նախապէս անյուսութեան խաւարի ամբողջ դառնութիւնը: Յարուցեալը նոցա աչքում իրրեմի ստուեր պէտք է երևար, իբրև մի անբացատրելի, ուրեմն և անխորհուրդ տեսիլք միայն՝ եթէ նոցա հոգու մէջ սեւեռուած չլինէր այն համոզմունքը, որ Նա զուր մեռաւ և մահուան արժանի ոչինչ չունէր, որ Նորա մեռնելուց յետոյ ոչ որ իրաւունք չունէր այլ ևս ապրելու: Մի փաստ էր պէտք, որ այդ համոզմունքն հաստատուն իրախնութեան զօրութիւն ստանար, և երբ փոստը արուեցաւ, դարձանալի չէ, որ նոցա մէջ ահագին փոփոխութիւն պէտք է տեղի ունենար: Այժմ՝ նոքա աներկիւզ և համարձակ վիպիկ կարող էին, որ խաչեցեալ Նազովրեցու աշակերտներն որովհետև իրենց աչքով տեսան, թէ ինչպէ՞ս Նա յաղթեց մահուան, և կեանքի իսկական աղբիւրը ճանաչեցին՝ սովորեցին ճշմարտութիւնն ու սրբութիւնը իբրև անպարտաւելի ոյժ գնահատել:

Մեր առաջ, չնայելով որ բոլորովին ուրիշ պայմանների մէջ ենք գտնուում և դարերի անջրպետով հեռու նոցանից՝ նոյն ճանապարհն է դժած: Որպէս զի Քրիստոսի ու Յարութիւնը լոկ մի վերացական ըմբռնում չլինի մեզ համար, այլ կենդանի իրողութիւն և կենդանարար ճշմարտութիւն, պէտք է մենք ևս նախ այն համոզումը ձեռք բերենք, որ նա մեռնել չէր կարող: Ընքնախարէութիւն կլինէր կարծել, թէ Նւզարեր կանանց ու մի քանի ուրիշ ականատեսների վկայութիւնը չսէլ բաւական է, որ մենք Նորա յարութեանը հաւատանք: Նորա ժամանակակիցներն իսկ՝ այդպէս, օտարների ասելով

չեն հաւտացել, այլ Նորա շնաշխարհիկ կեանքի բոլոր հանգամանքներին ծանօթանալով և իրենց հոգու առաջ Նորան կենդանի տեսնելով: Հեշտ ու խելքի մտտիկ բան չէր կենդանի խոստովանել Նորան, որին մեռած տեսել էին. հեշտ չէ առհասարակ, եթէ լուրջ մտածենք՝ ընդունել, որ մէկը կայ կենդանի, մինչ ամէն ինչ մեռնում է մեր շուրջը, երեկուայ կենդանին այսօր հողի հաւասարուումն ասոր տարի առաջ անմահ հոչակուածն այսօր անյիշատակ մնում: Այո՛, աւեր ու ամայութիւն է մեր շուրջը՝ խաւար ոչ պակաս թանձրամած քան այն, որ խաչեցեալ Յիսուսի շուրջը պատեց ահաւոր ժամին. եթէ մենք այնչափ թեթեամիտ չլինէինք ու հաշիւ տայինք մեզ՝ ինչ սոսկալի բան է զգալ, որ մեր կեանքն սպառում է իւրաքանչիւր ակնթարթում, տեսնել, որ աշխարհը պտոյտ է դալիս մեր սաքի տակ, և ոչ մի յենակէտ չունենալ, իրերի ու պատկերացումների հրակայական խռոնուրդի մէջ ոչինչ չգանել հաստատուն, ոչինչ արժէքաւոր և աւականս—պէտք է յուսահատութիւն մեզ տիրէր, և երթայինք առաջին պատահած ծառից կախուէինք: Քրիստոսի աշակերտներից միայն մասնիչն այդպէս վարուեց, որովհետեւ ինքն իւր համար փակել էր յուսոյ աղբիւրը, իսկ նոքա, որոնք չկամեցան հաշտուել այն մտքի հետ, թէ չարութիւնը բարւոյ, ստութիւնը ճշմարտի գէժ յաղթանակ տանել կարող է, արժանացան ճշմարտութեան յաղթանակը տեսնելու և վերածնուելու: Եւ նոյն ճշմարտութիւնը, որ նոցա առաջ կենդանի կերպով պատկերացել էր յանձին երկնաւոր Վարդապետի՝ մեր առաջ ևս կենդանի է Նորա թողած երկնաւոր վարդապետութեան, Նորա հաստատած ս. եկեղեցու միջոցաւ: Ընտանեկան յարկի ներքոյ քրիստոնեայ ծնօղներից, դպրոցում ուսուցչի բերանից, եկեղեցում Աստուծոյ սեղանի վերայից լսած աւետարանը պէտք է մեր մէջ հաստատէ հեազհետէ այն զխաակցութիւնը, թէ մի իբօք գեղեցիկ, արժէքաւոր ու իւր ներքին դորութեամբ անպարտելի բան կայ կեանքի մէջ, որ Եւր հետ աշխարհ է բերել Աստուծոյ Միածին Որդին: Այն ժամանակ մեր կուրծքի տակ մի անկիւն կունենանք, ուր

Յարութեան մեծ աւետիքն արձագանք գտնէ, և ընդունակ կլինինք գոնէ մի քանի ժամով հեռացնել մեզնից ակուր մտածութիւնները, գծուծ հաշիւներն ու անօրեայ հոգսերը, սրբազան բերկրանքով ու ոգևորութեամբ դիմել անմահ Յարուցեալին, Նորա յարութեան խորհուրդի մէջ մեր սեփական կեանքի վերանորոգումը տեսնել:

Սակայն Յարութեան լոյսը պէտք է սիւսուած լինի ոչ միայն մի քանի ասոնական ժամերի, այլ մեր ամբողջ կեանքի վերայ. ինչպէս և Քրիստոս մի քանի օրուայ համօր միայն յարութիւն չառաւ, այլ յաւիտենական կեանքի համար, — և խոստացաւ ընդ միշտ Նւր հեռեողների մէջ լինել: Յարութիւն քարոզող առաքեալներն իբրև յայտարար նշան այն հաւատքի, որ իրենց միացնում էր կենդանի Փրկչի հետ, ցոյց էին տալիս ս. Հոգւոյ շնորհները: Խաչեցեալ Յիսուսն ասում էին նորա յարութիւն տեսնելով՝ Նւր Հօր մօտից ուղարկեց Ճշմարտութեան և սրբութեան այն Հոգին, որ ինչպէս տեսնում էք, մեզ ոգևորում, մեր բերանով լեզուներ է խօսում, մեր ձեռքով հրաշքներ գործում, ապաշխարեցէք և հաւատացէք Յարուցեալին, որպէս զի դուք ևս Հոգւոյ աւետիան ընդունէք: — Քուում է թէ առաքելական այս հրաւերը ներկայ ժամանակում աղգեցութիւն գործել չի կարող, որովհետև չենք տեսնում ս. Հոգւոյ շնորհները, որ Յարուցեալի կենդանի ներկայութիւնը մեր մէջ զգալ տար, ստիպէր հաւատալ Նորան և ապաշխարել: Բայց այդպէս է միթէ: Աստուծոյ Հոգին առաքեալների բերանում լեզու դրաւ հեթանոսներին քարոզելու. նոյն Հոգին չէ միթէ, որ աշխարհի բոլոր լեզուներով քարոզել է տալիս այսօր Ճշմարտութեան աւետարանը: Աստուծոյ Հոգւոյ գորութեամբ առաքեալները կոյրերի աչքը բանում, հիւանդներին բժշկում էին. նոյն Աստուծոյ անունը չէ՞ գրուած այսօր հազարաւոր ազատարանների, հիւանդանոցների, անկեղանոցների ճակատին: Աստուծոյ Հոգւով վառուած առաքեալներն իրենց ստացուածքը հասարակաց դարձրին, չունեորներին և կարօտեալներին բաժանելով հանրամարդկային եղբայրութեան հիմքը դրին. կանգուն չէ միթէ, և օր աւուր աւելի չէ՞ ընդարձակուում

այդ հիմքի վերայ կառուցուած հսկայական անխորտակելի շինուածքը, որի հովանին վայելում են յաճախ ընտանին ու օտարը հաւասար շափով: Սիրոյ և եղբայրութեան անուշից ո՞վ այսօր չի խօսում: Իսկ ուր սէր և եղբայրութիւն կայ, ուր ընկածին ոտքի են կանգնեցնում տառապեալի դատը պաշտպանում, վշտացեալին սիրովում, քաղցածին հաց տալիս, մերկին զգեստ . . . ուր յաւիտենական ճշմարտութեան լոյսն է սփռուում, բարոյական սրբութեան հուրը բորբոքում—այնտեղ Աստուծոյ Հոգին է գործում, այնտեղ ներկայ է և կենդանի Յարուցեալ Փրկիչը: Եւ ամէն անգամ երբ հնչում է Յարութեան աւետիսը քրիստոնեայ աշխարհի մէջ, պէտք է նոր գորութեամբ հանդէս գայ նաև կենդանարար ս. Հոգին, և Քրիստոսի իւրաքանչիւր հաւատացեալ Աստուածային Հոգւոյ այդ շարժումն զգալով իւր սրբտի խորքում, յառաջ ընթանայ արիաբար կեանքի ասպարէզի վերայ՝ մասնակցելու ճշմարտութեան, սրբութեան և սիրոյ յաղթանակին, Յարութեան օրհներգը բերան առած.—Քրիստոս յարեալ ի մեռելոց, ալէլուիա:

Կ. Վ.



Չ Ա Տ Կ Ի Ն

Երբ դարնան առաջին ծիծեռնակի հետ
 Նոր կեանքի մի վառ շունչ լցնում է հոգիս,
 Երբ պղտոր վտակի ալիքներ վէտ—վէտ
 Տալիս են մի քաղցրիկ ողջոյն հէք սրտիս,—

Ձգում եմ, որ մաշուած ոյժերս են դարձնում,
 Ձգում եմ, որ դեռ ևս մօտ չէ ծերութիւն,
 Նոր երգի դիւթական ձայներ եմ լսում,
 Եւ մատաղ հուր—բոցով եռում իմ արիւն . . .